

Огуль

Гульмурат

891.99
0-79

Г. Гульмурат

1909 г.

SEP 2010

61.346

Ա Ն Ջ Ե Ր

ՋԱՎԱԼԼԸՆ

ՅԱԿՈՒԲ (սպասաւոր)

ՄԻԻՍԻԻ ԿՈՄԻՏԱՍ (վարժապետ)

ԲԱՐԻ ՈԳԻ ՄԸ (այս դերը պէտք է կատարէ երիտասարդունի մը)



55824-66

Այս կատակախաղին ներկայացման իրաւունքը վերապահուած է հեղինակին՝ որուն պէտք է դիմել պայմաններու մասին :



Ջ Ա Վ Ա Լ Լ Ը Ն



Տեսարանը կը ներկայացնէ փոքրիկ գինեւուն մը որուն դրան առջեւ դրուած են քանի մը յարդէ արուններ ու փայտ սեղաններ:

ՏԵՍԻԼ Ա.

ՅԱԿՈՒԲ ԵՒ ԿՈՄԻՏԱՍ

(Կովիտաս սեղանի մը առջեւ նստած կը մտախիւ. սեղանին վրայ դրուած են շիշ մը օդի, փոքրիկ գաւաթ մը եւ պնակ մը մէզէ: Յակոբ սեղանները կը արքէ հայտնեն կամ քրքերեն ժողովրդական երգեր երգելով:)

Յակոբ. — Թօճա՛Ֆ բան, այսօրուան պէս բնաւ ձայնս ազէկ կ'լած չէր (կ'երգէ) Բնչ աղւոր ձայն, չէ՛ (Կովիտասին դառ-

նաշով) այս ապուշն ալ կը խմէ, կը խմէ կը քնանայ. (դառնորթեանք) ասանկ ձայն մը ունենամ և հօս կարգ մը պարապ մարդերու գաւաթը տասը փարայի ճիւղ հրամցնեմ . . . վա՛յ կիտի բախտ վա՛յ . . . (կ'երգե) այս ձայնովս եթէ խահուէի մը մէջ խաղ կանչէի կամ բեմը ելլայի . ոսկի կը վաստկէի . ոսկի . . . բայց, ինչ օգուտ . եղածը եղած է . ախ վախը փարա չընեք, ծառայ եկեք՝ ծառայ պիտի երթանք . . . մեր ազգը ապերախտ է, իր տաղանդները վարձատրել չիտէ (երգերով գիւնեսուն կը մտնէ):



ՏԵՍԻԿ Բ.

ԿՈՄԻՏԵՍ, ԶԱՎԱԼԼԵՆ

(Զարխարը յոգևած դադրած կուգայ. մաքուր բայց շատ հիւս հագուստ մը հագած, սեռ հագուստ մը՝ որ ա՛յ կանանչևաչ սկըսած է, գրուխը կրոր բռնի գրխարկ մը որուն ներկը գացած եւ կարմրիչ սկսած է: Սեղանի մը առջեւ, արողին վրայ կ'իյնայ):

Զավալլըն. — Օ՛Ք. յոգնեցայ, չարաչար յոգնեցայ, ալ քալելու կարողութիւն չունիմ . . . յոգնեցայ առանց տասը փարա վաստկելու, մինչդեռ մարդիկ կան որոնք դրամ կը շահին առանց յոգնելու, գրասեղանին առջեւ նստած . . . ու . . . յետոյ, սոսկալի կերպով ալ ծարաւ եմ, իրա՛ւ կ'ըսեմ, ծարաւէս կը մարիմ կոր: Իմ բազմաչարչար երկա՛ր կեանքիս մէջ, որ այնքա՛ն լեցուն է ծարաւի վայրկեաններու յիշատակով. երբէք այս բոպէիս նման ծարաւացած չեմ . . . գոնէ չեմ յիշեր (գրպանեկն տասը փարանոց մը կը հանէ եւ սեղանին զարնելով) Ծօ՛, Յակօբ . . . (խնկիրեն) այսօրուան ելած սանդուխներս Աստուած գիտէ, և աշխարհիս վրայ չի կայ բան մը որ մարդս

այնչա՛րի ծարաւցնէ և օղին փնտռել տայ որչափ օղը տաք օր սանդուխս ելլելը . . . նոյնչափ ալ սանդուխէն վար իջնալը կը ծարաւցնէ և որովհետեւ սանդուխներէն վեր ելլելէս ետքը՝ վար ալ ինչոյ, ա՛լ ծարաւիս չափը կրնաք ըմբռնել: (Սեղանին կը զարնէ կրկին) Յակօբ . . . : Եթէ քանի մը շաբաթէ ի վեր ելած իջած սանդուխներս քով քովի բերեմ, Խայել ճաղիի գագաթը կը հասնիմ (աւելի ուժով կը զարնէ սեղանին) ծօ՛ Յակօբ . . . աս Յակօբը քիչ մըն ալ չի դայ նէ՛՛ տեղս ծարաւէն մեռած ու լեզուն դուրս ինկած չոր դիակ մը պիտի գանայ:



ՏԵՍԻԿ Գ.

ԿՈՄԵՔ, ՅԱԿՈՐ

Յակօբ. — Ըմէսօս, կէլիօր, եկա՛յ . . .
 Զավալլըն (ձեռները վեր բարձրացնելով). — Փա՛նք Աստուծոյ, փա՛նք յարութեանդ քօ Տէ՛ր:
 Յակօբ. — Վա՛յ դո՛ւն ես, միտիւ Գրիգոր, ինչ կայ չի կայ:
 Զավալլըն. — Է՛հ, սանկ նանկ, կ'երթանք կոր, կամ աւելի ձիշղը՝ եղած տեղերնիս կեցեր ենք:
 Յակօբ. — Գործ մը գտար:
 Զավալլըն. — Զէ՛, աղբար, չէ՛, ուր գացինք նէ՛՛ հիմա-կուհիմա գործ չի կայ, բան մը ըլլայ նէ՛՛ մենք լուր կուտանք ըսին:
 Յակօբ. — Հա՛, հա՛, հա՛:
 Զավալլըն. — Թօհաֆիդ կուգայ կոր, հա՛:
 Յակօբ. — Զէ՛, բայց ինչ ընեմ, նստիմ լա՛մ, ես ալ իմ տէրտտ ունիմ, ինչ ոչ է թողու՛նք ատիկա. է՛յ, ինչ պիտի իմես, ա՛ն նայինք . . . մաստիքա՛ս . . .
 Զավալլըն. — Զէ՛, մաստիքա չեմ ուզեր . . . շատ ծա-

բաւցած եմ: Մաստիքա խմել երբ ծարաւցած ես, Աստուծոյ դէմ մեղանչել, Աւետարանէն թուղթ պատուել է . . . տիւզ մը բեր ինծի:

Յակոբ . — Շիշէ՞ մը:

Զավալլըն (հառաչելով) . — Չէ՛, գաւաթ մը:

Յակոբ . — Գլխուս վրայ (երգելով ներս կը սննէ):



ՏԵՍԻԼ Գ.

ԿՈՄԻՏԵՍ, ԶԱՎԱԼԼԵՆ

Զավալլըն . — Տեսէ՛ք, խաղ կը կանչէ կոր, աւանակը, տէրտ չունի, առտուընէ մինչև իրիկուն խաղ կը կանչէ . . . երանի՛ իրեն . . . :



ՏԵՍԻԼ Ե.

ՆՈՅՆՔ, ՅԱԿՈԲ

Յակոբ . — Ահա՛ տիւզը:

Զավալլըն (օղիին մեջ փչմը ջուր կը ղեցնէ ու ի մի ունայ կը խմէ) . — Խմուելիք բան չէ աս օղին . . . կազ է կազ:

Յակոբ (պարսպ գաւարին նայելով) . — Խմուելիք ըլլար նէ՛ արդեօք ի՞նչ պիտի ընէիր:

Զավալլըն . — Եթէ խմուելիք ըլլար՝ հատ մըն ալ պիտի ապսպրէի:

Յակոբ . — Շիտակը ըսեմ, իրա՛ւ, մեր տիւզը շատ աղէկ չէ, բայց հոս եկողներն ալ շատ բարակը չեն նայիր (խօսակ-

ցութիւնը փոխելով) ըսել է, միւսիւ Գրիգոր, միշտ պարսպ կը պտտիս:

Զավալլըն . — Ախո՛ս, միշտ . . . պարսպութիւնը կարծես տւական գործ մը եղաւ ինծի համար . . . քիչ մը խնայողութիւն ըրած էի ան ալ հատնելու վրայ է (դրամները կը հաւնէ) վեց զրուշ տասը փարա մնացեր է:

Յակոբ . — Մէկ մասը պանքան դի՛ր, տոկոսը կ'առնես:

Զավալլըն . — Կատակի ատեն չէ, պէ՛ մարդ, վեց զրուշ տասը փարայով մինչև տարեգլուխ պիտի ապրինք և դեռ յունիս ամսուն մէջն ենք:

Կոմիսսա (որ ասեցնէ մը ի վեր արքնցած է ու խօսակցութեան կը հեռուի) . — Շիտակը դժուար բան:

Զավալլըն . — Ա՛յց զրուշ տասը փարա, մարդու մը համար որ առտուընէ մինչև իրիկուն ծարաւ է և ստիպուած է օղի խմելու . . . օՓ, օՓ . . . ինչ է նէ՛ սպասենք և յուսանք . . . ու մանաւանդ մոռնանք: Հիմակ, Յակո՛բ, ինծի տիւզ մըն ալ տո՛ւր, տղա՛ս, օղին մոռացումն է: Օղին կեանք կոչուած այս երկրային թիարանէն դէպի երկինք փախուստն է:

Յակոբ (շար չհասկնալով) . — Կարելի է . . .

Կոմիսսա (հաւնոգուած շեշտով մը) . — Հա՛տ շիտակ, շատ աղւոր կը խօսի կոր միւսիւ Գրիգորը . . . Սողոմոն խմաստունն ալ կ'ըսէ. «Տո՛ւք զարբեցութիւն տրամեցոց, զի արբցեն և մոռացեն զազբատութիւնս իւրեանց և զցաւս իւրեանց ո՛չ յիշեացեն . . . » (գաւաթ մը օղի կը պարսպէ ի մի ունայ):

Յակոբ (ծաղրակալ) . Ա՛մէն:

Զավալլըն . — Մի՛ խնդար տղա՛ս, երբեմն, Գիշերը, փողոցը գացած ատենդ, ցեխին մէջ գլտորած մարդ մը կը տեսնաս և «գինով մըն է» կ'ըսես ու կ'անցնիս կ'երթաս, բայց չէ՛ բարեկամ, փախտական մը . . . կեանքի թիարանէն փախըստական մըն է:

Յակոբ . — Եւ ասոր համար է որ ոստիկաններն ալ կը բռնեն խարախօլ կը տանին այդ փախտականը . . . տիւզի՛ հետ ի՞նչ մէզէ կ'ուզես:

Զավալլրն . — Քիչ մը շըրոզ :

(Յակոբ ներս կը մտնէ երգելով :))



ՏԵՍԻԼ Զ.

ԶՍՎԱԼԼՐՆ ԵՒ ԿՈՄԻՏԱՍ

Զավալլրն . — Ի՛նչ ուրախ է այս աւանակը , ինչպէ՛ս յայտնի է որ գործ մը ունի և ի՛նչ աղւոր գործ . . . մոռա-
ցումի մատրուակ :

Կոմիտաս . — Պատրանքի միջնորդ (գաւաթը կը շեցնէ ու
կը խմէ :))



ՏԵՍԻԼ Է.

ՆՈՅՆՔ, ՅԱԿՈՐ

Յակոբ (երգելով ներս կը մտնէ եւ օղին կը բերէ Զավալ-
լլին) :

Զավալլրն . — Ուրախ ես , Տէ՛ . . .

Յակոբ . — Ե՛ս , ընդհակառակը , բնաւ ուրախ չեմ :

Զավալլրն . — Հապա մինչև ետքը կ'երգես կոր նէ՛ . . .

Յակոբ . — Երգելու համար անպատճառ ուրախ ըլլա՞լմ
պէտք է . . . կ'երգեմ որովհետև երգիչ եմ :

Զավալլրն . — Երգիչ . . .

Յակոբ . — Հապա՛ . . . նայէ սովորական ծառայի կերպա-
րանք ունի՞մ (շփուելով եւ դերասանի ձեւ առնելով) առ-
թիսթ եմ , միւսիւ Գրիգոր . սոթիսթ :

Զավալլրն . — Թօ՛Տա՛Փ բան . . .

Յակոբ . — Ա՛խ , միւսիւ Գրիգոր . չլսուած , չտեսնուած
բան մը , տխուր պատմութիւն մըն է իմ պատմութիւնս ,
կեցի՛ր պատեմ , եթէ վայրկեան մը ունիս :

Զավալլրն . — Եթէ վայրկեան մը ունի՞մ մի , հարիւր հատ
վայրկեան . հազար հատ վայրկեան ունի՞մ , արգէն , փա՛ռք
Ըստուժոյ , ուրիշ ի՛նչ ունի՞մ որ . . . վայրկեանէն զատ : Պատ-
մէ՛ նայինք . տղաս , պատմէ :

Յակոբ . — Կեցի՛ր պատեմ և պիտի տեսնաս որ մինակ
դուն չես դժբախտ աշխարհի վրայ . . .

Կոմիտաս . — Ա՛յո՛ , ես ալ հոս եմ . . .

Զավալլրն . — Աշխարհս սկիզբէն գէշ յօրինուած է . ար-
դէն . աճապարանքով , վեց օրուան մէջ շինուած աշխարհ մը
սակէ աղէկ չէր կրնար ըլլալ . . . պատմէ՛ նայինք . . .

Յակոբ . — Քանի մը տարի առաջ քաղինոյի մը մէջ կառ-
սօն էի , գէմերնիս թատրոն մը կար , տաճկերէն օբէրէթներ
կը խաղային . լսելով , լսելով ես ալ սկսայ երգել , ձայնս
լսողները ըսին որ հիանալի ձայն ունի՞մ . փարս ծախսեցի երգի
դաս առնել սկսայ և օր մըն ալ խումբին մէջ մտայ :

Զավալլրն . կը շնորհաւորեմ , կը շնորհաւորեմ , չէի գիտեր
որ այսպիսի տաղանդաւոր արուեստագէտ մըն է ինձի ծառա-
յողը :

Յակոբ . Մտիկ ըրէ՛ , աղբար , բեմին վրայ ելածիս պէս
ձայնս բռնուեցաւ , ձայն չի կայ պէ՛ , նա՛ (կոկորդը ցոյց կու-
նայ եւ ձայն հաւնել ուզող եւ չկրցող մարդու մը ձեւը կ'ընէ)
այն եւ ձայնս ստիպուեցայ նորէն
աղւոր մը խաղք եղանք . . . այն ատեն ստիպուեցայ նորէն
կառսօնի գոգնոցս կապել և նորէն ամէսօս , կէլէյօր , եկաւի
սկիւլ :

Զավալլրն . — Է՛հ , ի՛նչ ընես , աս ալ գործ մըն է :

Կոմիտաս . — Ա՛մէն պարագային վարժապետութիւնէն ա-
րեւ է (կը խմէ) :

Յակոբ . — Ա՛յո՛ , բայց ինձի համար չէ . . . աս մտիկ

ըրէք, հազիւ ութը որ էր որ կառսօնուծիւն կ'ընէի ձայնս նորէն բացուեցաւ . . . կը զարմանաս կոր հէ:

Զավալլըն (պաղ կերպով) . — Ես ա՛լ բանի մը չեմ գարմանար աշխարհքիս վրայ:

Յակոբ . — Երբ տեսայ որ ձայնս աղէկ է . գոգնոցս մէկ կողմ կը նետեմ ու նորէն թաարոն կը մտնամ:

Զավալլըն . — Էյ . . .

Յակոբ (սխրորեաւք) . — Ո՛հ, մնացածը կրնաս գուշակել:

Զավալլըն . — Թատրոն մտնելուդ պէս նորէն ձայնդ մարեցաւ:

Յակոբ . — Ճիշտ գուշակեցիր, և անկէ ետքը միշտ ասանկ կ'ըլլայ կոր . կառսօն եղա՛յ մի, հիանալի ձայն մը, աղբար, բեմին վրայ ելա՛յ մի՛ պապանձումն Զաքարիայի:

Զավալլըն . — Թօհա՛նք բան . գիտես ինչ ընելու ես:

Յակոբ . — Ըսէ՛ տեսնենք:

Զավալլըն . — Նայէ՛ որ գափէ շանթանի մը մէջ գործ գտնաս, մէկ կողմէն խաղ կը կանչես, միւս կողմէ կառսօնուծիւն կ'ընես:

Յակոբ . — Շիտակը գէշ խելք չէ:

Զավալլըն . — Ախո՛ս, ես այդ միջոցները չունիմ . ո՛չ երգիչ եմ, ո՛չ կառսօն: Հաշուակալ եմ, պարասպ հաշուակալ մը որ գործ կը փնտռէ ու չգտնար:

Յակոբ . — Մի՛ յուսահատիր, միտիւ Գրիգոր, ես վստահ եմ որ բնաւ չսպասած ատենդ աղէկ գործ մը պիտի գտնաս, համբերուծիւնը կեանք է:

Զավալլըն . — Այո՛, բայց փարասըղուծիւնն ալ մահ է:

Կովիսաս . — Գերադրական մահ մանաւանդ (կը խառն):

Յակոբ . — Դուն իմին խօսքիս նայէ՛:

Զավալլըն . — Ատուած լսէ ձայնդ . քանզի ա՛լ համբերուծիւնս հատաւ, բոլոր այս դիմումները, բոլոր այս ստորնացումները, ազաւանքներն ու մերժումները . . .

Յակոբ (սխրորեաւք) . — Իմ ալ գլխէս անցեր են:

Կովիսաս . — Հապա ի՛մ (կը խառն):

Զավալլըն (փիլիսոփայաբար) . — Ո՛հ, ստորնացումները, շիտակը, շատ հոգս չեն, քանզի երկար ատենէ ի վեր ինծի անանկ դէմք մը շինած եմ որ ա՛լ կարմրիլ չգիտեր:

Յակոբ (ծաղրակալ) . — Քու տեղդ գլխարկդ կը կարմրի կոր:

Զավալլըն (զղխարկը հսկելով ու վրաս նայելով) . Իրա՛ւ կարմրեր է:

Յակոբ . Ատոր հակառակ, ըրտէնկօձդ ալ շատ աղւոր կանաչ գոյն մը առեր է:

Զավալլըն . — Բնութեան գաղտնիքները, տղա՛ս, բնութեան գաղտնիքներն են ասոնք: Ո՛վ կրնայ բացատրել թէ ինչո՛ւ ժամանակ կոչուած այդ զարմանալի ներկարարը կարմիրի կը ներկէ հին գլխարկները, մինչդեռ սեւ ուրտէնկօթներուն կանանչ գոյն կուտայ (զղխարկը կը մօտեցնէ իր ռքեակիօրի քեւին) ըրտէնկօձիս կանանչը տես ինչպէս դուրս կը ցատկեցնէ կոր գլխարկիս կարմիրը . . . թէև ես կը նախընտրէի նուազ կոր գլխարկիս հագուստ մը: Երբ արդեօք Մայէրէն կամ Շթայնէն ձեռք մը նոր լաթ պիտի կրնամ առնել:

Յակոբ . — Մեծ փառասիրուծիւն մը չէ ունեցածդ:

Զավալլըն . — Փառասիրուծիւն . . . կեանքիս մէջ երբեք փառասէր չեմ եղած արդէն: Քեզի անկեղծօրէն բան մը ըսեմ, օրը եթէ մէկ մէծիտ ունենամ, հաւատա՛, աշխարհի ամենէն երջանիկ մարդը կ'ըլլամ:

Յակոբ . — Օրը մէկ մէծիտ . . . ինծի կուգայ որ քիչ մը քիչ է:

Զավալլըն . — Ես էւելօք գո՛հ կ'ըլլամ օրը մէկ մէծիտով . . . (երկու ձեռքը վեր բարձրացնելով ու հառաչ մը արձակելով) բայց ո՛ւր է այն բարի ոգին որ ինծի օրական մէկ մէծիտ ապահովէ . . . ո՛ւր է այդ բարի ոգին:

(Հեռուէն, ջուրակի խորհրդաւոր եղանակ մը կը շուշի, խօսողները մէկէն ի մէկ կը շուշի եւ իրարու երես կը նային,

Կռմիսսա աճապարակնով՝ գարաքը կը լեցնէ ու ի մի ունկ կը պարպէ :)



ՏԵՍԻԼ Ը.

ՆՈՅՆՔ , ԲԱՐԻ ՈԳԻՆ

Բարի ոգին . — Բարի ոգի՞ մը , ո՞վ ուզեց բարի ոգին . . . ահաւասիկ եկայ :

(Զավաղըն , Յակոբ եւ Կռմիսսա շուարած , շիրքած ծուռնկի վրայ կուզան աղօթելու ձեռով :)

Զավաղըն . — Ինչ . . . զո՞ւք էք բարի ոգին . . .

Բարի ոգին . — Այո՛ , բարի ոգի մըն եմ ես . ինչ կայ զարմանալիք :

Զավաղըն . — Բան չի կայ . . . կամ մանաւանդ շատ զարմանալի դիպուած :

Բարի ոգին . — Գո՞ւն ինծի կանչեցիր , զավաղը մարդ :

Զավաղըն . — Այո՛ , ես էի . . . կը ներէք :

Բարի ոգին . — Ըղէկ ես ըրեր , քանզի իս կանչողը պարսպ չեկար : Ըսէ՛ , նայինք , ինչ պիտի խնդրես ինէ :

Զավաղըն . — Քիչ մը առաջ միւսիւին կ'ըսէի որ (Յակոբը ցոյց կուտայ) օրական մէկ մէծիտով աշխարհիս ամենէն երջանիկ մարդը կ'ըլլամ :

Բարի ոգին . — Օրական մէկ մէծիտ . . . զավաղը մարդ . շիտակը չեմ կրնար ըսել որ փառքի ու ճոխութեան սողի ես :

Զավաղըն . — Քիչ մը առաջ միւսիւին կ'ըսէի որ երբ եք փառասէր չեմ եղած :

Բարի ոգին . — Ուրեմն օրական մէկ մէծիտ բաւական է քեզի . զավաղը մարդ :

Զավաղըն . — Իւելօք :

Բարի ոգին . — Լաւ ուրեմն , երջանիկ եղի՛ր , զավաղը մարդ , խնդիրքդ պիտի կատարուի :

Զավաղըն (յափշջակուած) . — Իրա՛ւ , աս բարիքը պիտի կրնա՞ք ընել ինծի համար :

Բարի ոգին . — Բայց անշուշտ , ապուշ արարած . առկէ դիւրին ինչ կայ Բարի ոգիի մը համար . . . միայն թէ որովհետեւ ես ուրիշ շատ գործեր ունիմ եւ ամէն առտու չեմ կրնար մէկ մէծիտ տալու համար գալ քեզ փնտուել , պէտք է որ հաշիւդ ընեմ եւ բոլոր գրամը մէկէն քեզի յանձնեմ , որպէս զի ամէն օր մէյմէկ մէծիտ ծախես :

Զավաղըն . — Բոլորը մէկէն . . . բոլոր հաշիւը մէկէն . . . բոլորը . . . է՛յ , հիմայ կը խնեթնեմ :

Բարի ոգին . — Հանդարտէ՛ . զավաղը մարդ , հանդարտէ՛ : **Յակոբ (իմֆն ալ իիացած) .** — Բոլորը մէկէն . . . տեսա՞ր հիմա , քեզի չըսէ՛ որ չսպասած տեղէդ բախտդ պիտի բացուի :

Զավաղըն . — Իրաւունք ունիս , տղաս , իրաւունք ունիս . . . (Բարի ոգիին) է՛յ , երբ պիտի բարեհաճիք մաքրել մեր պատիկ հաշիւը :

Բարի ոգին . — Ինչո՞ւ կ'աճապարես , զավաղը մարդ , պէտք է որ առաջ կենաց գիւրքին մէջ հաշիւդ նայիմ եւ անոր համեմատ փարաներդ բերեմ : Սպասէ՛ քիչ մը , ես հիմա կուգամ (դուրս կ'ելլէ) :



ՏԵՍԻԼ Թ.

ԶԱՎԱՂՔՆ , ՅԱԿՈԲ , ԿՐՄԻՍՍԱ

Յակոբ . — Շիտակը բախտիդ ըսելիք չի կայ . գործ մը կը փնտուէիր կոր եւ անոր տեղ ամբողջ հարստութիւն մը գտար :

Չավալլըն (սժգոն կերպարանիով) . — Ամնա հա հարըս-
տու թիւն . . . օրը մէճիտ մը ; աչքդ վրան մնաց :

Յակոբ . — Շիտակը դուն ալ ապուշու թիւն ըրիր, աւելի
ուզելու էիր :

Կովիսաս . — Հապա իմ ապուշու թիւնս որ բան մը չու-
զեցի (կը խմե) :

Չավալլըն . — Ասանկ ըլլալիքը որո՞ւ միտքէն կ'անցնէր . . .

Յակոբ . — Հիմա նայինք ինչ պիտի ընես այդ փարաները :

Չավալլըն . — Էն առաջ մէյ մը նոր գլխարկ մը պիտի
առնեմ, ետքն ալ ձեռք մը սե հագուեստ : Ասով քիչ մը մար-
դու կարգ կ'անցնիմ :

Յակոբ . — Հարկաւ սանկ աղւոր քէյֆ մըն ալ պիտի
ընես , հէ . . . քէհատխանէն կամ Պէօյիւք Տէրէի ջուրերը :

Չավալլըն . — Քէյֆ մի՞, առ էր պակաս . . . օրական
մէկ մէճիտով . . . խնեթ ես ինչ ես , աղբար , նախ շէնք
շնորհք փորերնիս կշտացնենք :

Յակոբ . -- Մեղք , նորէն կ'ըսեմ . քիչ մը էւել ուզելու
էիր :

Չավալլըն (նսածկոս) Շիտակ է, ապուշու թիւն ըրի, պէտք
էր օրական ոսկի մը ուզէի , ինչ կարելորութիւն ունի բարի
ոգիի մը համար :

Յակոբ (ձեռքը գլխին գարնեղով) . — Միտքս բան մը ին-
կաւ . քանի որ բոլոր զրամդ ամբողջութեամբ մէկ անգամէն
պիտի առնես , սարաֆութիւն ըրէ , փոխանակ ապուշի պէս
օրը մէկ մէճիտով ապրելու :

Չավալլըն . — Աղէկ , բայց կ'ըլլա՞յ մի ես . ես մէկ մէ-
ճիտի իրաւունք ունիմ , անկէց աւելի չեմ կրնար ծախսել :

Յակոբ . — Ատ իրաւ է , բայց ես եթէ քու տեղդ ըլլամ
ատանկ բարակը չեմ նայիր : Այդ բերելիք զրամը քուկդ է :
կրնաս ուզածիդ պէս գործածել :

Չավալլըն (վարանոս) . — Ինչ է նէ՛ ետքը կը մտածենք ,

Յակոբ . — Կամ եկուր քաֆէ շանթան մը բաց , ես ալ
կ'երգեմ . . . նայիս ինչ փարա կը վատակինք :

Կովիսաս . — Աւելի պատուաւոր գործ մը ըսե՛մ , դպրոց
մը բաց , ես ալ դաս կուտամ (կը խմե) :

Չավալլըն . — Պօրսան քօնսօլխա խաղամ նէ՛ չըլլա՞ր ար-
դեօք . . . (նոյն միջոցին ջուրակին ձայնը նորէն կը շուռի
նետրեւն) Սո՛ւս եղէք , ահա բարերարս կուգայ կոր . . . (Բարի
ոգին հետուէն կը մօտենայ կանաց կանաց) ան չէ ամա փա-
րաները ո՞ւր գրեր է . . . տպրակ մտպրակ չունի ձեռքը :

Յակոբ . — Կարելի է պանքսօթ փարա պիտի տայ :

Չավալլըն . — Կամ Պանք Օթօմանի վրայ չէք մը բերած է :



ՏԵՍԻԼ Ժ.

ՆՈՅՆՔ , ԲՍԸՐ ՈԳԻՆ

Բարի ոգին . — Բարե , բացակայութեանս ատեն սիրտդ
չնեղացաւ ա՛ . . .

Չավալլըն . — Չէ՛ , միւսիւններուն հետ կը խօսակցէի ,
ապագային համար ծրագիրներ կը պատրաստէի :

Բարի ոգին . — Ա՛յ . . .

Չավալլըն . — Գեո աղէկ մը չորոշեցի ինչ ընելիքս :

Բարի ոգին . — Զաւակս , հիմա կ'որոշես (իրեն 30 դրուշ
կուսայ) ա՛ն նայինք հաշիւդ , գովալլը մարդ :

Չավալլըն (ապուշ ապուշ դրամներուն նայելով) . — Ինչ
. . . ինչ է աս . . .

Բարի ոգին . — 30 դրուշ է ամբողջ հաշիւդ . . .

Չավալլըն . — Ամբողջ հաշիւս . . . երեսուն դրուշ . . .
միայն երեսուն դրուշ :


Բարի ոգին . Այո՛ , գովալլը մարդ , կենաց գիրքին մէջ
հաշիւդ նայեցայ , մէկուկէս օր ունիս ապրելիք , օրը մէկ մէ-
ճիտէն երեսուն դրուշ չընէ՛ր . . .

Չավալլըն . — Երեսուն դրուշ . . . մէկուկէս օր . . .

Բարի ոգին . — Այժմ, օրը մէկ մէծիտէն մէկուկէս օր . . .
այսքան դժուար է հաշիւը . . . մեղք որ այսքան տարուան
հաշուակալ մըն ես :

Զավալըն (պահ մը ապուշ ապուշ Բարի ոգիին ու Յակոբին
կը նայի, յետոյ վճռաբար) . — Այժմ, հասկցայ մէկուկէս
օր ունիմ ապրելիք . . . ծօ Յակոբ, ա՛ն սա մէծիտը հինգ
շիշէ տիւզ ու շնոհքով մէզէ շիտկէ բեր . . . միտաւ Կոմի-
տաս դուն ալ աթոռոգ առ սեղանիս մօտեցիր . . . Յակոբ
դուն ալ եկուր միտսին խմենք (Բարի ոգին կը պատրաստուի
մեկնեշուր, Զավալըն օձիֆէն կը բռնէ) չէ՛, անանկ բան չը-
լար դուն ալ պիտի նստիս, մեզի հետ պիտի ձնկես. քէյ՛Ք
մը պիտի ընենք վերջին և առաջին անգամ . . .

(Վարսագոյրը կ'իջնէ):



... քան զոր ու զի՛ն . . . Եւ ինչպէս զայն . . .
... անհն զանոս զի քոյն . . . անհն զանոս զի քոյն . . .
... անհն զանոս զի քոյն . . . անհն զանոս զի քոյն . . .

Table with multiple columns containing page numbers and text fragments, likely a table of contents or index. The text is partially obscured and difficult to read due to the image quality and orientation.

... անհն զանոս զի քոյն . . . անհն զանոս զի քոյն . . .
... անհն զանոս զի քոյն . . . անհն զանոս զի քոյն . . .
... անհն զանոս զի քոյն . . . անհն զանոս զի քոյն . . .

Չարդարեան գրատունը հրատարակած է հին ու նոր սղ-
գային ու հայրենասիրական գործերու շարք մը որոնք մեծա-
պէս գնահատուած են ընթերցասէր հասարակութեան կողմէ :

1. Սեւ Հողեր կամ Յեսին Գիօբեր Արարատեան , թատրերգ .
Պետրոս Դուրեանի, 5 արար 2
2. Աւերակ (Բանտի յիշատակներ) , Վահան Թոթովենցի 1
3. Ընդարձակ Հայկական Երգարան Ա. հատոր , 3.50
4. Վանգոյժ Խրիմեան Հայրիկի , 1.50
5. Երգեր եւ Տալեր . Պ. Դուրեան (պատկերով) 1
6. Հայգոյժ Խրիմեան Հայրիկի 2
7. Ընդարձակ Հայկական Երգարան , Բ. Հատոր 3.50
Նոյնը Ա. եւ Բ. հատոր 7.50, լաթակազմ
8. Աւերումն Անի Մայրաքաղաքին , թատր . Պ. Դուրեանի 2
9. Յալին Տուեր (Բանտի յիշատակներ) Լ. Շաթրեանի 4
10. Եղիա Տեմիրխիյաւեան . Լ. Էսէճանեան (պատկերով) 1.50
11. Երիտասարդը . Շ. Լուի Պէն.քս. Թրդմ. Ռօզմէրի 1.50
12. Չայնագրուած Հայկական Երգարան , Բ. Կանաչեան, Ա.
մաս , պատկերազարդ , 40 երգերով 5
Նոյն , բաժանորդագրութիւն Բ. Գ. եւ Գ. մասերու 15
13. Ժամանակ եւ Խորհուրդ իւր , Խրիմեան Հայրիկ ,
հասոյթը ի նպաստ Վանայ Վարագայ վանքին 1.50
14. Սով եւ Ման , Ուրուր 1
15. Մըինգ , քերթուածներ , Վահան Թոթովենցի 2.50
16. Ընդարձակ Հայկական Երգարան , Գ. Հատոր 3.50
Նոյնը Ա. Բ. եւ Գ. հատոր միացեալ
17. Հայ հերոսի արձաններ , Ա. Նուր Շահնազար 10
18. Ֆրանսօ-քրեական պատերազմ կամ Չարբլը Արքին 3
ալա , կատակերգ . Եր. Օտեան , 3 արար 3
19. Պատասխան Ռուս Սինդիի բանադրագրին , Տօլսթոյ 1
21. Զավալլըն , Եր. Օտեան կատակախաղ մէկ արար 1

ՄԱՄՈՒԼԻ ՏՍԿ

20. Յիւստակարան . 19րդ դարէն երեւելի Հայերու լու-
սասիրտ պատկերները , ձեռագիրները , կենսագրու-
թիւնները , հեղինակութիւնները եւ դրուածքները ,
չբիղ տպագրութեամբ եւ թղթով , Ա. տետր 2.50

Գինը ՉԱՐԴԱՐԵԱՆ Գրատուն
Կ. Պոլիս , Չախմախչար . քիւ 24 , 26



61.346